ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԶՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИИ АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ с. ДЖРАШЕН

0942. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Գ. ԶՐԱՇԵՆ
հեռ. 098037111
«13» դեկտեմբերի 2011թ. թիվ 63

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Զրաշենի գյուղական համայնքի ավագանու 2011թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 5նիստի որոշումները:
Առդիր՝ 7 թերթ:

ԶՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ԴԱՎԹՅԱՆ

12095-11
«16» 12 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ
2011թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 05 նիստի թիվ 11

ՋՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով՝ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ է.

1. Հաստատել ավագանու նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.Հ.Հակոբյան			
2.Լ.Համբարձումյան			
3.Մ.Հախվերդյան			
4. Հ. Հակոբյան			
5. Ա.Շահմուրադյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԴԱՎԹՅԱՆ

2011թվականի
դեկտեմբերի 6
գ. Ջրաշեն

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 05ՆԻՍՏԻ ԹԻՎ 11
ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 05ՆԻՍՏԻ

11.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրաշենի գյուղական համայնքի ավագանու 2011թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 05 նիստի օրակարգը հաստատելու մասին.

Զեկ.՝ Խ. Դավթյան

12. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրաշենի համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին.

Զեկ.՝ Խ. Դավթյան

13. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրաշենի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2012թվականի դրույքաչափերը.

Զեկ.՝ Խ. Դավթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«6 » դեկտեմբերի 2011թ. թիվ12-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրաշեն համայնքի 2012 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով՝ 14463.8 հազար դրամ, ծախսերի գծով՝14463.8 հազար դրամ, դեֆիցիտը /պակասորդ/ 0.0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:

6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի / պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:
9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 40 տոկոսը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅԿ			
2.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԼԵՈՆ			
3.ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՄԻՇԱ			
4.ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ			
5.ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԵՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Խ. ԴԱՎԹՅԱՆ

2011 թվականի
դեկտեմբերի 6
գ. Զրաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ

2011թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 05 նիստի թիվ 13-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածով համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրաշենի գյուղական համայնքի վարչական տարածքում 2012թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.Հ. Հակոբյան			
2.Լ. Համբարձումյան			
3.Մ. Հախվերդյան			
4.Ա. Հակոբյան			
5.Ա. Շահմուրադյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Խ. ԴԱՎԹՅԱՆ

2011թվականի
դեկտեմբերի 6
գ. Ջրաշեն

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻՀ 6-Ի
ԹԻՎ 05ՆԻՍՏԻ ԹԻՎ 13-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝
1. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և՝ հասարակական և՝ արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000/հինգ հազար/ դրամ,
2. սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
2.1. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 /տաս հազար/ դրամ,
2.2. 501-ից մինչև 1000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000/տասնհինգ հազար/ դրամ,
2.3. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000/քսանհինգ հազար/ դրամ,
3. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000/մեկ հազար/ դրամ,
4. 20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000/երկու հազար/ դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
1. չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 500/հինգ հարյուր/ դրամ,
2. բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:
3. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2000/երկու հազար/ դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել.

1. ոգելից խմիչքների վաճառքի թուլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000/երեք հազար/ դրամ,
2. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000/երեք հազար/ դրամ:
5. Համայնքի տարածքում՝
1. բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 250դրամ,
2. հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ:
6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30000/երեսուն հազար/ դրամ:
7. Համայնքի տարածքում ՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝
1. առևտրի օբյեկտների համար՝ 25 000/քսանհինգ հազար/ դրամ,
2. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000/հիսուն հազար/ դրամ
3. բաղնիքների /սաունաների/ համար՝ 150 000/մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ,
4. խաղատների կազմակերպման համար՝ 500 000/հինգ հարյուր հազար/ դրամ,
5.շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ,
6. վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 /մեկ հարյուր հազար /դրամ:
8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝
1. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000/մեկ հազար/ դրամ,
2. թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500/մեկ հազար հինգ հարյուր/ դրամ,
3. այ արտաքին գովազդի համար՝ 500/հինգ հարյուր/ դրամ,
4. ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 2500/երկու հազարհինգ հարյուր/ դրամ,
5. դատարկ գովազդային վահանակների համար՝ 700/յոթ հարյուր/ դրամ:
9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000/մեկ հազար/ դրամ:
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանել 3000/ երեք հազար/ դրամ:
11. Գյուղապետարանի կողմից մրցություններ և աճուրդներ կազմակերպելու հետ հապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար 1000/մեկ հազար/ դրամ:
12. Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ: